ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ»

ՊՈԱԿ

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Հեռ. (+37410) 77-77-10
Հեռ./ֆաքս (+37410) 77-77-04

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

"НАЦИОНАЛЬНОЕ БЮРО ЭКСПЕРТИЗ"

ГНКО

0004, г. Ереван, пр. Адмирала Исакова 24
Тел. (+37410) 77-77-10
Тел./факс (+37410) 77-77-04

№ 20-0137Ք
23 հոկտեմբերի 2020 թ.

ԹԻՎ ԼԴ/2720/02/19 ՔԱՂ. ԳՈՐԾՈՎ
ՀԱՅՑՎՈՐ՝ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
« ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
/ՀՀ ք. Երևան, Իսակով 9
հեռ.՝ 011-54-67-93/
ՊԱՏՃԵՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ՝
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
/ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր
Մխիթար Գոշի 6,
հեռ.՝ 0322-2-33-93/

Թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործով 15.10.2020թ-ին ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ դատավոր Ա. Վարդանյանի նախագահությամբ, կայացված որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում նշանակվել է դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն, որը ստացվել է 21.10.2020թ-ին: Համաձայն դատարանի որոշման՝ փորձաքննության կատարման հետ կապված ծախսերը դրվել են հայցվոր կողմի վրա:

Հայտնվում է, որ թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործով նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերը կազմում են 188160 /հարյուր ութսունութ հազար հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, ուստի խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում կատարել դատարանի որոշման պահանջը և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ՀՀ ՖՆ գանձապետարան Երևանի թիվ 1 ՏԳԲ Հ/Հ 900018005588 հաշվեհամարին փոխանցել 188160 /հարյուր ութսունութ հազար հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ՝ նպատակը բաժնում նշելով քաղաքացիական գործի համարը՝ ԼԴ/2720/02/19 :

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ Ա. ԳԱՀՆԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝
Շինարարատեխնիկական փորձաքննությունների
բաժնի պետ Ա. Միրաքյան
Ապրանքագիտական փորձաքննությունների
բաժնի պետ Հ. Գաբրիելյան
հեռ. 77-77-10 /+145, +149/

Մատակարար	ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ	
Հասցե **Հ/Հ** **Բանկ** **ՀՎՀՀ**	քաղաք Երևան, Իսակովի 24 900018005588 ՀՀ ՖՆ գանձապետարան Երևանի թիվ 1 ՏԳԲ 01836525	**Փոխանցման հաշիվ N 03** օր 16/03/2021
Վճարող **Հասցե** **Հ/Հ** **Բանկ** **ՀՎՀՀ**	ՀՀ ԿԱ Ոստիկանության ՃՈ պետական կառավարչական հիմնարկ ք.Երևան, Իսակովի 9 900011024321 ՀՀ ՖՆ Աշխատակազմի գործառնական վարչություն 01840082	Պայմանագիր/պատվեր N 20-0137Ք

Լրացում՝ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Վարդանյանի 15.10.2020թ-ի որոշման թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործի համաձայն

NN	Անվանումը	Քանակը	Միավ.	Գինը	Գումարը
1	13-01..Շինարարատեխնիկական փորձաքննություն /Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների ճանապարհաշինարարական և այլ կառուցապատման օբյեկտների փորձաքննություն/հետազոտություն/ 2-րդ կարգ	1	հատ	70,560	70,560
2	16-05...Ապրանքագիտական փորձաքննություն/Անշարժ գույքի, այդ թվում դրա արժեքային ցուցանիշների փորձաքննություն/հետազոտություն/ 3-րդ կարգ	1	հատ	117,600	117,600
			Ընդամենը՝ (ներառյալ ԱԱՀ-ն)		188,160
			Վճարման գումարը՝		188,160

Գումարը բառերով՝ Մեկ հարյուր ութսունութ հազար հարյուր վաթսուն ՀՀ դրամ

Կ.Տ.

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ

Տնօրեն՝ _____ Ա. Հովսեփյան

Գլխ.հաշվ.՝ _____ Լ. Հայրապետյան

Կ.Տ.

ՀՀ ԿԱ Ոստիկանության ՃՈ պետական կառավարչական հիմնարկ

_____

_____

Գործ թիվ ԼԴ/2720/02/19

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԴԱՏԱՇԻՆԱՐԱՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Վանաձոր

15 հոկտեմբերի 2020թ.

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Վարդանյանս, քննարկելով ըստ հայցի ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության ընդդեմ Արամ Սամվելի Սարոյանի, պատասխանող կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք Լարիսա Ալեքսանդրի Քոչարյանի, Սերգո Սամվելի Սարոյանի, Աննա Սամվելի Սարոյանի և Սամվել Փայլակի Սարոյանի՝ բաժնեմասը բնեղենով առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործով հայցվոր ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության միջնորդությունը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության ընդդեմ Արամ Սամվելի Սարոյանի, պատասխանող կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք Լարիսա Ալեքսանդրի Քոչարյանի, Սերգո Սամվելի Սարոյանի, Աննա Սամվելի Սարոյանի և Սամվել Փայլակի Սարոյանի՝ բաժնեմասը բնեղենով առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին:

2019թ. հոկտեմբերի 01-ի դատարանի որոշմամբ նշանակվել է նախնական դատական նիստ:

Քանի որ հայցվորի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել գործը քննել հայցվորի ներկայացուցչի բացակայությամբ, 2020թ. հոկտեմբերի 15-ին նշանակված նախնական դատական նիստի ընթացքում դատարանի կողմից հրապարակվել է հայցվոր ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության ներկայացուցիչ Լ.Մկրտչյանի՝ դատաապրանքագիտական և դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը:

Միջնորդությամբ հայցվորի ներկայացուցիչը խնդրել է Արամ Սամվելի Սարոյանի բաժինը բնեղենով առանձնացնելու հնարավորությունը և գույքի շուկայական արժեքը պարզելու համար նշանակել դատաապրանքագիտական և դատաշինարարատեխնիկական փորձաքննություն և փորձագետների լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ հնարավոր է արդյոք Լոռու մարզ, Փամբակ համայնքում գտնվող բնակելի կառուցապատման հողամաս /սեփ. վկայական՝ 994186/ և շինություն /սեփ. վկայական՝ 994217/ անշարժ գույքերին առանց էական վնաս պատճառելու, տեխնիկապես բնեղենով առանձնացնել Արամ Սամվելի Սարոյանի բաժնեմասը, թե ոչ, և եթե հնարավոր է, ապա ինչ եղանակով,

բ/ որքան է կազմում վերոնշյալ գույքի շուկայական արժեքը, և ըստ դրա՝ որքան կկազմի Արամ Սամվելի Սարոյանի բաժնի շուկայական արժեքը:

Միաժամանակ, նշել է, որ մասնագիտացված փորձագիտական հաստատության կամ փորձագետի ընտրությունը թողնում է դատարանի հայեցողությանը:

Պատասխանողը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք 2020թ. հոկտեմբերի 15-ին հրավիրված նախնական դատական նիստին չեն ներկայացել, ինչպես նաև դատարան չեն ներկայացրել որևէ դիրքորոշում և/կամ միջնորդություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 147 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստն անցկացրել է գործին մասնակցող անձանց բացակայությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը կարող է փորձաքննություն նշանակել գործին մասնակցող անձի միջնորդությամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր նախաձեռնությամբ:

Տվյալ դեպքում, դատարանը գտնում է, որ քանի որ կողմերի միջև առկա վեճը՝ բաժնեմասի առանձնացումը և/կամ գույքի արժեքի որոշումը պահանջում է տվյալ ոլորտում հատուկ գիտելիքների կիրառում, հետևաբար հայցվորի միջնորդությունը ենթակա է բավարարման, և թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործով անհրաժեշտ է նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ին, իսկ փորձագետներին պետք է առաջադրել հայցվորի ներկայացուցչի կողմից առաջադրված հարցերը:

Փորձաքննության կատարման համար փորձագետներին տրամադրել սեփականության իրավունքի թիվ 994217 և թիվ 994186 վկայականների պատճենները՝ հատակագծերով:

Դատարանը գտնում է նաև, որ փորձաքննությանը պետք է ներգրավվեն դատավարության մասնակիցները և/կամ նրանց ներկայացուցիչները, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ներկայությունը կարող է խանգարել փորձագետի բնականոն աշխատանքին, իսկ դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննության հետ կապված ծախսերը դնել միջնորդություն ներկայացրած կողմի՝ հայցվոր ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, եթե՝ նշանակել է փորձաքննություն:

Այս առումով, նկատի ունենալով, որ նշանակվել է դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն, իսկ այդ ընթացքում չկա այլ դատավարական գործողություն կատարելու հանգամանք, ուստի դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է կասեցնել մինչև փորձագիտական եզրակցության ստանալը կամ օրենքով սահմանված այլ հանգամանքների վրա հասնելը:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86 հոդվածով, 157 հոդվածի 2-րդ մասով և 199, 200, 361, 362 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ըստ հայցի ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության ընդդեմ Արամ Սամվելի Սարոյանի, պատասխանող կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք Լարիսա Ալեքսանդրի Քոչարյանի, Սերգո Սամվելի Սարոյանի, Աննա Սամվելի Սարոյանի և Սամվել Փայլակի Սարոյանի՝ բաժնեմասը բնեղենով առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործով հայցվորի միջնորդությունը բավարարել, և նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ին:

2. Փորձաքննությանը ներգրավել թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործով մասնակիցներին և/կամ նրանց ներկայացուցիչներին, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ներկայությունը կարող է խանգարել փորձագետի բնականոն աշխատանքին:

3. Դատավարության կողմերին պարտավորեցնել փորձաքննության կատարման համար փորձագետներին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր և չխոչընդոտել փորձաքննության կատարմանը:

4. Փորձագետներին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Միջնորդությամբ հայցվորի ներկայացուցիչը խնդրել է Արամ Սամվելի Սարոյանի բաժինը բնեղենով առանձնացնելու հնարավորությունը և գույքի շուկայական արժեքը պարզելու համար նշանակել դատաապրանքագիտական և դատաշինարարատեխնիկական փորձաքննություն և փորձագետների լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ հնարավոր է արդյոք Լոռու մարզ, Փամբակ համայնքում գտնվող բնակելի կառուցապատման հողամաս /սեփ. վկայական՝ 994186/ և շինություն /սեփ. վկայական՝ 994217/ անշարժ գույքերին առանց էական վնաս պատճառելու, տեխնիկապես բնեղենով առանձնացնել Արամ Սամվելի Սարոյանի բաժնեմասը, թե ոչ, և եթե հնարավոր է, ապա ինչ եղանակով,

բ/ որքան է կազմում վերոնշյալ գույքի շուկայական արժեքը, և ըստ դրա՝ որքան կկազմի Արամ Սամվելի Սարոյանի բաժնի շուկայական արժեքը:

Միաժամանակ, նշել է, որ մասնագիտացված փորձագիտական հաստատության կամ փորձագետի ընտրությունը թողնում է դատարանի հայեցողությանը:

Պատասխանողը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք 2020թ. հոկտեմբերի 15-ին հրավիրված նախնական դատական նիստին չեն ներկայացել, ինչպես նաև դատարան չեն ներկայացրել որևէ դիրքորոշում և/կամ միջնորդություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 147 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստն անցկացրել է գործին մասնակցող անձանց բացակայությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը կարող է փորձաքննություն նշանակել գործին մասնակցող անձի միջնորդությամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր նախաձեռնությամբ:

Տվյալ դեպքում, դատարանը գտնում է, որ քանի որ կողմերի միջև առկա վեճը՝ բաժնեմասի առանձնացումը և/կամ գույքի արժեքի որոշումը պահանջում է տվյալ ոլորտում հատուկ գիտելիքների կիրառում, հետևաբար հայցվորի միջնորդությունը ենթակա է բավարարման, և թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործով անհրաժեշտ է նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ին, իսկ փորձագետներին պետք է առաջադրել հայցվորի ներկայացուցչի կողմից առաջադրված հարցերը:

Փորձաքննության կատարման համար փորձագետներին տրամադրել սեփականության իրավունքի թիվ 994217 և թիվ 994186 վկայականների պատճենները՝ հատակագծերով:

5. Փորձագետներին առաջադրել հայցվորի կողմից առաջադրված հետևյալ հարցերը.

- հնարավոր է արդյոք Լոռու մարզ, Փամբակ համայնքում գտնվող բնակելի կառուցապատման հողամաս /սեփականության վկայական՝ 994186/ և շինություն /սեփականության վկայական՝ 994217/ անշարժ գույքերին առանց էական վնաս պատճառելու բնեղենով առանձնացնել Արամ Սամվելի Սարոյանի բաժնեմասը, թե ոչ և եթե հնարավոր է, ապա ինչ եղանակով,
- որքան է կազմում վերոնշյալ գույքի շուկայական արժեքը, և ըստ դրա՝ որքան կկազմի Արամ Սամվելի Սարոյանի բաժնի շուկայական արժեքը:

6. Դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննության հետ կապված ծախսերը դնել միջնորդություն ներկայացրած կողմի՝ հայցվոր ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության վրա:

7. Թիվ ԼԴ/2720/02/19 քաղաքացիական գործի վարույթը կասեցնել՝ մինչև փորձագիտական եզրակացության ստանալը կամ օրենքով սահմանված այլ հանգամանքների վրա հասնելը:

8. Որոշումը դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասով ուժի մեջ է մտնում կայացման պահից:

9. Որոշումը գործի վարույթը կասեցնելու մասով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ